Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքների գնահատում







ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքների գնահատման սոցիոլոգիական հետազոտությունը իրականացվել է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության կողմից՝ «Հաշմանդամություն ունեցող ՎԻՊ կանայք (Վեհ, Ինքնուրույն, Պրոակտիվ)» ծրագրի շրջանակներում: Հետազոտությունը ֆինանսավորվում է Շվեդիայի զարգացման աջակցության և Կվիննա Թիլ Կվիննա (Kvinna till Kvinna) հիմնադրամի կողմից: Հետազոտության բովանդակության համար պատասխանատու է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոնը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Շվեդիայի զարգացման աջակցության և Կվիննա հիմնադրամի տեսակետները:

2023թ. Հոկտեմբեր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ 3

Երախտիքի խոսք 4

Նախաբան 5

Ընդհանուր տեղեկություններ 6

Կրթական կարիքներ 12

Զբաղվածություն 14

Առողջապահական կարիքներ 18

Բռնություն 23

Սոցիալական պաշտպանություն 26

Հիմնական բացահայտումներ 29

Առաջարկություններ 32

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԿԿ	Անկախ կյանքի կենտրոններ
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՁԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄՍԾ	Միասնական սոցիալական ծառայություն

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքների գնահատման սոցիոլոգիական հետազոտությունը հնարավոր դարձավ մասնակիցների, հետազոտական խմբի, «Ագաթ» ՀԿ-ի, դոնոր կազմակերպությունների՝ Շվեդիայի զարգացման աջակցության և Կվիննա Թիլ Կվիննա հիմնադրամի, և տարբեր գործընկերների շնորհիվ:

Հետազոտության իրականացման համար շնորհակալություն ենք հայտնում բոլոր կառույցներին և անհատներին, որոնք աջակցեցին հետազոտության իրականացման տարբեր փուլերում:

Շատ կարևոր և գնահատելի է ծրագրային և հետազոտող թիմի նվիրումը և աջակցությունը հետազոտական գործընթացներին: Ծրագրային թիմը հատուկ շնորհակալություն է հայտնում հարցազրուցավարներին և հաշմանդամություն ունեցող կանանց, ովքեր մասնակցել են հարցազրույցներին և տրամադրել են անհրաժեշտ տեղեկատվություն:

ՆԱԽԱԲԱՆ

Հաշմանդամություն ունեցող կանայք, սեռով և հաշմանդամությամբ պայմանավորված, ենթարկվում են կրկնակի խտրականության: Հաշմանդամություն ունեցող կանանց բռնության ենթարկվելու ռիսկն ավելի մեծ է թե՛ տանը, թե՛ արտաքին միջավայրում: Ադրբեջանի հետ զինված հակամարտության հետևանքով Լեռնային Ղարաբաղից և Հայաստանի սահմանամերձ շրջաններից բռնի տեղահանված անձինք հայտնվում են խոցելի կարգավիճակում: Իսկ հաշմանդամություն ունեցող բռնի տեղահանված կանայք հայտնվում են առավել դժվար իրավիճակում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ շատ կարևոր է հասկանալ, թե ինչ իրավիճակում են հայտնվել զինված հակամարտությունների հետևանքով բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք, ինչ դժվարությունների են բախվում իրենց իրավունքներն իրացնելիս, ինչ կարիքներ ունեն տարբեր ոլորտներում և որքանով են այդ կարիքները հաշվի առնվում պետական և քաղաքացիական հասարակական կառույցների կողմից:

Մինչ այժմ չի իրականացվել առանձին հետազոտություն բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց շրջանում: Սա առաջին փորձն է՝ համապարփակ ձևով ուսումնասիրելու և վեր հանելու բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքները բնակարանային պայմանների, կրթության, զբաղվածության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում:

Սույն հետազոտությունն իրականացվել է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության կողմից՝ «Հաշմանդամություն ունեցող ՎԻՊ կանայք (Վեհ, Ինքնուրույն, Պրոակտիվ)» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է նպաստել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների, ներառյալ՝ բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց, անկախ կյանքին և տնտեսական հզորացմանը Հայաստանում:

Հետազոտության շրջանակներում իրականացվել է քանակական հետազոտություն Լեռնային Ղարաբաղից և սահմանամերձ շրջաններից բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող 47 աղջիկների և կանանց հետ: Հետազոտությունն իրականացվել է ստանդարտացված հարցազրույցի մեթոդով: Հետազոտության գործիքը ներկայացված է հավելվածում: Հավաքված տեղեկատվությունը մշակվել և վերլուծվել է SPSS հավելվածով:

Հետազոտության արդյունքում ունենք՝

1. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքների համապարփակ գնահատում,
2. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքների գնահատման փորձարկված և բարելավված մեթոդաբանություն և գործիքակազմ, որը կարող է օգտագործվել 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների կարիքները գնահատելիս:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց միջին տարիքը 35 տարեկանն է, իսկ ամենահաճախ հանդիպող տարիքը՝ 37-ը: Ըստ տարիքային խմբերի բաշխման, հարցմանը առավել քիչ մասնակցել են 19-29 տարեկան բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք, առավել հաճախ՝ 35-39 տարեկան կանայք: Տարիքային բաշխման ամբողջական պատկերը ներկայացված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բաշխումը՝ ըստ տարիքային խմբերի: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցմանն առավել հաճախ մասնակցել են ֆիզիկական խնդիրներ ունեցող բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք, այնուհետև՝ առողջական խնդիրներ ունեցող բռնի տեղահանված կանայք: Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց 54,4%-ն ունի բազմակի հաշմանդամություն:

Գծապատկեր 2. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց հաշմանդամության խումբը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց մեծամասնությունը՝ առավել քան մեկ երրորդը, բնակվում է Երևանում, Սյունիքի և Կոտայքի մարզերում: Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք առավել հազվադեպ բնակվում են Վայոց ձորի, Շիրակի և Արմավիրի մարզերում: Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բնակության մարզի վերաբերյալ ամբողջական պատկերը ներկայացված է գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բաշխումը՝ ըստ ներկայիս բնակության մարզի: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հետաքրքրական է, որ հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք գրեթե հավասարապես են բնակվում քաղաքային և գյուղական բնակավայրերում, մինչդեռ ըստ Ազգային վիճակագրական ծառայության 2022թ. տվյալների[1], ՀՀ-ում գյուղական բնակչությունը ընդհանուր բնակչության միայն 36%-ն է կազմում: Սա նշանակում է, որ հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք տեղահանությունից հետո կարողացել են կացարան գտնել գյուղական համայնքներում:

[1] https://armstat.am/file/article/demog_2022_2.pdf

Գծապատկեր 4. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բաշխումը ըստ բնակավայրի տիպի: Պատասխանները ներկայացված են %-ով:



Գծապատկեր 5. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բաշխումը՝ ըստ կացարանի տիպի: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք մեծամասամբ (90%-ից ավելի դեպքերում) բնակվում են բնակարանում և առանձնատանը: Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանցից որևէ մեկը չի նշել, որ բնակվում է հանրակացարանում, հյուրանոցում, առողջարանում կամ հյուրատանը: Այնուամենայնիվ, 8.5%-ը նշել է, որ բնակվում է տնակում:

Կարևոր է փաստել, որ հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց 57.4%-ը բնակվում է վարձակալության հիմունքներով: Ընդ որում, քաղաքային համայնքներում բնակվող բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք զգալիորեն ավելի շատ են նշել, որ բնակվում են վարձակալության հիմունքներով, քան գյուղական համայնքներում բնակվող բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք:

Գծապատկեր 6. Տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բնակության/կացարանի պայմանները: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցվածներից միայն 1 կին է նշել, որ բնակվում է համայնքապետարանի կամ գյուղապետարանի կողմից տրամադրված տանը: Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց միայն 21.3%-ն է նշել, որ բնակարանը պատկանում է իրեն կամ իր ընտանիքին:
Միջինում, կացարանում բնակվում է 5 մարդ: Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց 4.3%-ը բնակվում է մենակ: Գերակշիռ մեծամասնության դեպքում բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք բնակվում են 2-4 և 5-7 անձ ունեցող ընտանիքներում: Սակայն, գրեթե 9% դեպքերում բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք բնակվում են 8 և ավելի անձանց հետ, ինչը կարող է անհարմարության պատճառ լինել: Մանրամասները ներկայացված են գծապատկեր 9-ում:

Գծապատկեր 7. Կացարանի ֆիզիկական հարմարավետության գնահատումը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց գրեթե կեսը նշել է, որ կացարանը ավելի շուտ հարմար չէ կամ ընդհանրապես հարմար

չէ ֆիզիկական կարիքներին: Միայն 2.1%-ն է նշել, որ կացարանը ամբողջությամբ հարմար է ֆիզիկական կարիքներին:
Ինչ վերաբերում է հոգեբանական հարմարությանը, ապա հարցվողները առավել հաճախ դեպքերում դժվարացել են պատասխանել՝ արդյո՞ք իրենց հոգեբանորեն հարմար և ապահով են զգում: Սա փաստում է այն մասին, որ տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք դժվարանում են գնահատել իրենց հոգեբանական վիճակը: Հարցված բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց շուրջ 5%-ը նշել է, որ իրեն հարմար և ապահով չի զգում տվյալ կացարանում: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք զգալիորեն ավելի բարձր են գնահատել իրենց հոգեբանական հարմարավետության աստիճանը, քան ֆիզիկական հարմարության աստիճանը: Մանրամասները ներկայացված են գծապատկեր 8-ում:

Գծապատկեր 8. Կացարանի հոգեբանական հարմարավետության գնահատումը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Գծապատկեր 9. Կացարանում բնակվող անձանց քանակը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Ինչ վերաբերում է բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց ամուսնական կարգավիճակին, ապա բավականին բարձր է ամուսնալուծված և այրի կանանց տոկոսը: Մեծ է նաև միայնակ կանանց տոկոսը՝ 41.3%:

Գծապատկեր 10. Հարցմանը մասնակցած տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց ամուսնական կարգավիճակը: Պատասխանները ներկայացված են %-ով:



ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

Վերլուծելով հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կրթական կարիքները՝ բավականին մտահոգիչ է, որ հարցմանը մասնակցած կանանց 12.8%-ը դպրոց չի հաճախել, իսկ 17%-ը թերի միջնակարգ կրթություն ունի: Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց միայն 17%-ն է ավագ դպրոց հաճախել: Մտահոգիչ է, որ հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանցից որևէ մեկը չունի մագիստրոսի և ասպիրանտի աստիճան:

Տեղահանության պահին որևէ ուսումնական հաստատության սան է հանդիսացել 7 հարցված, 7-ն էլ՝ հիմնական հանրակրթական դպրոցի աշակերտ: 7 աշակերտներից կրթությունը տեղահանությունից հետո չի շարունակել միայն 1-ը՝ դպրոցի հեռավորության և դասընկերների վատ վերաբերմունքի պատճառով:

Գծապատկեր 11. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կրթական աստիճանը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց մեծամասնությունը՝ 64.6%-ը, չի ցանկանում և կարիք չի զգում մասնակցել վերապատրաստման ծրագրերի: Հատկանշական է նաև այն, որ հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք ավելի շատ ցանկանում են մասնագիտական հմտություններ ձեռք բերել, քան փափուկ հմտություններ:

Հարցմանը մասնակցած կանանց միայն 14,9 %-ն է նշել, որ ունի նոր մասնագիտություն սովորելու կարիք:

Որպես նոր մասնագիտություն, որը կցանկանային սովորել, բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք նշվել են՝ հաշվետար (ՀԾ ծրագիր), ծաղկի դիզայն, լրագրություն կամ օպերատորություն, հոնքերի տատուաժ, սոցիալական հարցումների իրականացում, օտար լեզուներ, համակարգչային օպերատորություն մասնագիտությունները:

Գծապատկեր 12. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց վերապատրաստվելու կարիքը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Գծապատկեր 13. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց վերապատրաստվելու ցանկալի ուղղությունները: Պատասխանները ներկայացված են %-ով:



Գծապատկեր 14. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց նոր մասնագիտություն սովորելու կարիքները: Պատասխանները ներկայացված են %-ով:



ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Մտահոգիչ է, որ հետազոտությանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց շուրջ 72.4%-ը գործազուրկ է, որից 60%-ը չի փնտրում աշխատանք: Հարցին, թե ինչու՞, լինելով գործազուրկ, աշխատանք չեն փնտրում, ամենահաճախ տրված 2 պատասխանները պայմանավորված են մանկահասակ երեխաների խնամքով զբաղվելու, ֆիզիկական և առողջական խնդիրների հետ:

Որպես աշխատանք չփնտրելու պատճառներ, նշվել են նաև երբևէ աշխատած չլինելը, հմտությունների պակասը կամ բացակայությունը, ադապտացիայի դժվարությունները և աշխատավայրերի անմատչելիությունը:

Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող գործազուրկ կանայք, ովքեր փնտրում են աշխատանք, կազմում են 12.8% կամ 7 անձ: Աշխատանք փնտրող բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք նշել են, որ աշխատանք փնտրում են ֆեյսբուքյան խմբերի միջոցով (2 պատասխան), Միասնական սոցիալական ծառայության միջոցով (2 պատասխան), աշխատանքային հայտարարությունների կայքերի միջոցով (2 պատասխան) և ծանոթների միջոցով (2 պատասխան): Աշխատանք փնտրող բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանցից որևէ մեկը չի նշել, որ աշխատանք է փնտրում աշխատանքի մասնավոր գործակալութունների և տպագիր մամուլում /թերթերում, ամսագրերում/ տրված հայտարարությունների միջոցով:

Գծապատկեր 15. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց հիմնական զբաղվածությունը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Միասնական սոցիալական ծառայության մասին լսել է աշխատանք փնտրող բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող երկու կին, սակայն հարցմանը մասնակցած կանանցից ոչ մեկի համար միասնական սոցիալական ծառայությունը չի կարողացել աշխատանք գտնել:

Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց միայն 13.7%-ն է, որ ունի վարձատրվող աշխատանք: Հարցմանը մասնակցած աշխատող կանայք կատարում են հետևյալ աշխատանքները՝ սպասք լվացող, փողոցների մաքրման աշխատանքներ, վարսավիրանոցում լրացուցիչ աշխատանք, զինվորական աշխատանք կատարողներ:
Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող աշխատող կանանց (հարցին պատասխանել է չորս անձ) կեսը նշել է, որ աշխատավայրը ավելի շուտ հարմարեցված է իրենց կարիքներին: Իսկ կեսը դժվարացել է պատասխանել, թե որքանով է աշխատավայրը հարմարեցված իրենց կարիքներին: Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող աշխատող կանանցից ոչ մեկը չի նշել, որ աշխատավայրը լիարժեք կերպով հարմարեցված է իր կարիքներին:

Գծապատկեր 16. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող աշխատող կանանց աշխատավայրի հարմարեցվածությունը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող աշխատող կանանցից ոչ մեկը չի նշել, որ լիարժեք տիրապետում է աշխատանքային իրավունքներին: 75%-ը նշել է, որ որոշ չափով տեղյակ է աշխատանքային իրավունքների մասին: 50%-ը նշել է, որ իր աշխատանքային իրավունքները աշխատավայրում լիարժեք պաշտպանված են:

Գծապատկեր 17. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող աշխատող կանանց աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Գծապատկեր 18. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող աշխատող կանանց շրջանում աշխատանքային պայմանագրի առկայությունը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Գծապատկեր 19. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող աշխատող կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանվածության աստիճանը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Այնուամենայնիվ, հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց շուրջ 60%-ի համար հիմնական եկամտի աղբյուրը հաշմանդամության թոշակն է: Զինված հակամարտության հետևանքով բռնի տեղահանված լինելու համար աջակցություն ստանում է միայն 3.1%-ը: Իսկ 14.1%-ի համար հիմնական եկամտի աղբյուրն աշխատավարձն է:

Գծապատկեր 20. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված աշխատող հաշմանդամություն ունեցող կանանց եկամտի հիմնական աղբյուրները: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցին, թե ո՞րն է Ձեր երազանքի աշխատանքը, կարևոր է արձանագրել, որ բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց շուրջ 30%-ը նշել է, որ չունի երազանքներ, դժվարանում է պատասխանել կամ երբևէ չի մտածել աշխատելու մասին: Հաճախ կոնկրետ մասնագիտություն նշելու փոխարեն, կանայք նշել են, թե ինչ պայմաններում կցանկանան աշխատել, մասնավորապես՝ ընդգծել են աշխատանքի կայունությունը, հանգստությունը, տանից հեռավար աշխատելու հնարավորությունը, բարձր վարձատրվող լինելը:

Առավել հաճախ, որպես երազանքի աշխատանք, նշվել են գեղեցկության և խնամքի ոլորտի մասնագիտությունները, մասնավորապես՝ վարսահարդարումը և դիմահարդարումը: Հաճախ նաև նշվել է սեփական գեղեցկության սրահ ունենալը: Նշվել է նաև ծաղկի դիզայնը:

Գեղեցկության ոլորտի աշխատանքներից բացի, որպես երազանքի աշխատանք, նշվել են՝ նկարչուհի, բժշկուհի և դերձակ լինելը, դիվանագիտական աշխատանքը, թարգմանչական գործը, հաշվապահությունը:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

Առողջապահական կարիքների ուսումնասիրությունը փաստում է, որ հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց գրեթե մեկ քառորդից ավելին ունի վերականգնողական ծառայություններից օգտվելու կարիք, սակայն չի օգտվում: Այն կանայք, ովքեր նշել են, որ ունեցել են դեղորայքի կարիք, սակայն չեն ստացել կամ մասնակի են ստացել, որպես պատճառ, հիմնականում նշել են դեղերի թանկարժեք լինելը և տվյալ դեղորայքի Հայաստանում առկա չլինելը:
Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց գրեթե 60%-ը նշել է, որ չունի վերականգնողական ծառայությունների կարիք: Մոտ 40,4%-ն ունի վերականգնողական ծառայությունների կարիք, սակայն օգտվում է միայն 14,9%-ը:

Գծապատկեր 21. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող աշխատող կանանց վերականգնողական ծառայություններից օգտվելը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք առավել հաճախ նշել են, որ ունեն ֆիզիոթերապիայի կարիք, սակայն չեն օգտվում: 16.7%-ն ունի հոգեբանական ծառայությունների կարիք, սակայն չի օգտվում, և 21.1%-ն ունի ցերեկային խնամքի ծառայությունների կարիք, սակայն չի օգտվում:

Գծապատկեր 22. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց տարբեր վերականգնողական ծառայություններից օգտվելու կարիքները: Պատասխանները ներկայացված են %-ով:



Ինչ վերաբերում է բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց դեղորայքային կարիքներին, ապա 6.4%-ն ունեցել է դեղորայքի կարիք, սակայն անհրաժեշտ դեղորայքը չի ստացել: 40.4%-ը ստացել է մասնակի, և միայն 12.8%-ն է անհրաժեշտ դեղորայքը ստացել ամբողջովին:

Գծապատկեր 23. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց դեղորայքային կարիքները և դրանց ստացումը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Բժշկական ծառայություններից օգտվելու կարիք ունեցել է հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց 40%-ը: Ծուրջ 95% դեպքերում, կանայք ամբողջական կամ մասնակի կարողացել են օգտվել իրենց անհրաժեշտ բժշկական ծառայություններից, և միայն 5% կանանց դեպքում է, որ չեն կարողացել ստանալ անհրաժեշտ բժշկական ծառայությունը:

Գծապատկեր 24. Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բժշկի դիմելու կարիքները: Պատասխանները ներկայացված են %-ով:



Գծապատկեր 25. Հարցմանը մասնակցած, բժշկի դիմելու կարիք ունեցող բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բժշկական ծառայությունից օգտվելու հնարավորությունները: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց համար, գրեթե 10% դեպքերում, բժշկական հաստատությունը ամբողջովին կամ մասնակի ֆիզիկապես մատչելի չի եղել:
Ինչ վերաբերում է բժշկական անձնակազմի վերաբերմունքին, ապա միայն 5%-ն է նշել, որ բժշկական անձնակազմի վերաբերմունքն ընդհանրապես բարեհամբույր չի եղել:

Գծապատկեր 26. Բժշկական հաստատության ֆիզիկական մատչելիությունն՝ ըստ հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց: Պատասխանները ներկայացված են %-ով:



Գծապատկեր 27. Բժշկական անձնակազմի վերաբերմունքի գնահատումն՝ ըստ բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բացարձակ մեծամասնությունը, ովքեր ունեցել են բժշկական ծառայության կարիք, սակայն չեն կարողացել օգտվել, մեծամասամբ հիմնական պատճառ են նշել ֆինանսական միջոցների պակասը և բացակայությունը: Բացի ֆինանսական խնդրից, հաճախ նշվել են նաև պետպատվերի հետ կապված թղթաբանական բարդությունները, հետաձգումը և այլն: Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող մեկ կին նշել է, որ չի կարողացել բժշկական ծառայությունից օգտվել՝ համայնքում հիվանդանոցի և բժշկական կենտրոնի բացակայության պատճառով:

Գծապատկեր 28. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության կարիքները: Պատասխանները ներկայացված են %-ով:



Վերարտադրողական առողջության ծառայությունների կարիք ունեցած 4 կանանցից 3-ը կարողացել են օգտվել համապատասխան ծառայությունից, իսկ 1-ը չի կարողացել՝ բնակավայրին մոտ համապատասխան ծառայության բացակայության պատճառով:

ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Հասկանալու համար, թե որքանով են բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք տեղահանությունից հետո ենթարկվում բռնության, կատարվել է բռնություն հասկացության մանրակրկիտ օպերացիոնալացում: Ներառվել են բռնության տարբեր տեսակներ և չափումներ, ֆիզիկականից մինչև հոգեբանական և տնտեսական: Առավել համապարփակ պատկերը հասկանալու համար հետազոտվել է նաև, թե ինչ վայրերում են բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք բռնության ենթարկվում: Այս առումով հարկ է նշել, որ հարցմանը մասնակցած կանանցից ոչ մեկը չի նշել, որ բռնության է ենթարկվել աշխատավայրում, բժշկական հաստատությունում կամ ուսումնական հաստատությունում: Նրանք նշել են, որ բռնության ենթարկվել են տանը և դրսում:

Հետաքրքրական է, որ բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք ավելի հաճախ բռնության են ենթարկվել դրսում, քան տանը: Օրինակ՝ 4.3%-ը նշել է, որ դրսում իր հանդեպ եղել է ուժի գործադրման սպառնալիքներ և ուժի ցուցադրում, ինքնագնահատականն իջեցնող խոսքեր և ամոթանք: 2.1%-ը նշել է, որ իր հանդեպ դրսում եղել է արհամարհանք:

Ինչ վերաբերում է տանը կատարված բռնություններին, պետք է նշել, որ դրանք բավականին փոքր տոկոս են կազմել և, հիմնականում, կապված են տեղաշարժերի վերահսկման, արտաքին աշխարհի հետ կապի վերահսկման, որոշումների ընդունման վերահսկման, ինքնագնահատականն իջեցնող խոսքերի և ավելորդության զգացում առաջացնելու հետ:

Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք նշել են, որ տեղահանությունից հետո երբևէ չեն ենթարկվել բռնության հետևյալ տեսակներին՝ ֆինանսական միջոցների վերահսկում, հատուկ կարիքների անտեսում, հոգեբանական կարիքների անտեսում, ֆիզիկական կարիքների անտեսում, բուժման հնարավորություններից զրկում, սեռական գործողությունների մասին ակնարկ, ապտակ կամ քաշքշուք:

Ինչ վերաբերում է բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բռնության ենթարկվելու դեպքում վարքային մոդելներին, ապա ոգևորող է, որ բավականին շատ են պայքարի դրսևորումները, քան համակերպվելու և ոչինչ չանելու: Հարցված կանանց առավել քան 50%-ը նշել է, որ բռնության ենթարկվելու դեպքում պայքարել է սեփական ուժերով, իսկ 55.5%-ը դիմել է թեժ գծի ծառայության: Բավականին զգալի է նաև ոստիկանություն դիմած կանանց կշիռը՝ 19%:

Գծապատկեր 29. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բռնության տարբեր տեսակների ենթարկվելու հաճախականությունը: Պատասխանները ներկայացված են %-ով:



Գծապատկեր 30. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց վարքը բռնության ենթարկվելու դեպքում: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հետաքրքրական է, որ բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանցից որևէ մեկը բռնության ենթարկվելու դեպքում չի լքել ընտանիքը, չի դիմել աջակցման կենտրոններին:

Իսկ գրեթե մեկ երրորդը համակերպվել է և որևէ բան չի ձեռնարկել:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պաշտպանության ոլորտում բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքները գնահատելու համար իրականացվել է համապարփակ գնահատում՝ ամբողջական և բազմաշերտ տեղեկատվություն ունենալու համար: Մասնավորապես, հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք նշել են, որ ամենից շատ ունեն հիգիենիկ միջոցների, այնուհետ՝ սննդի, դեղորայքի և հագուստի կարիք:

Գծապատկեր 31. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքները տարբեր ոլորտներում: Պատասխանները ներկայացված են %-ով:

Հարցված բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց 24%-ը զգում է սոցիալական աշխատողի կարիք, 16%-ը զգում է հոգեբանի, 12,8%-ը զգում է աջակցող միջոցների, 10,7%-ը զգում է անձնական օգնականի, 8,5%-ը զգում է իրավաբանական խորհրդատվության կարիք, և 4,2%-ը զգում է տնային խնամքի ծառայության կարիք:

Գծապատկեր 32. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց իրազեկվածությունը համայնքում գործող հասարակական կազմակերպությունների վերաբերյալ: Պատասխանները ներկայացված են %-ով:



Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք տեղյակ են իրենց համայնքներում գործող հետևյալ հասարակական կազմակերպությունների մասին՝ **«Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ, «Գործընկերություն և զարգացում» ՀԿ, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ, «Կոնտուր գլոբալ», Կույրերի միավորում, Հայ օգնության ֆոնդ, «Օրրան» բարեգործական հիմնադրամ, «Առաքելություն Հայաստան» ՀԿ:** Հարցմանը մասնակցած կանանցից միայն մեկն է անդամակցում հասարակական կազմակերպության, տվյալ դեպքում՝ **«Առաքելություն Հայաստան» ՀԿ**-ին:

Ինչ վերաբերում է տարբեր ծառայություններ ստանալուն, ապա գերակշիռ մեծամասնության դեպքում բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք գրեթե չեն օգտվում որևէ ծառայությունից: Մասնավորապես, որևէ կին չի ստացել աջակցող միջոցներ և հագուստ, 98% դեպքերում որևէ կին չի ստացել սոցիալական աշխատողի, իրավաբանական խորհրդատվության, տրանսպորտային տեղափոխության և սննդի տրամադրման աջակցություն: Քիչ քանակով՝ առավելագույնը 5% դեպքում, բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք ստացել են հոգեբանի ծառայություն և հիգիենիկ միջոցներ, իսկ դեղորայքը ձեռք են բերել միայն մասնավոր միջոցներով:

Գծապատկեր 33. Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց տարբեր ծառայություններից օգտվելու պատկերը: Պատասխանները ներկայացված են %-ով:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների 8.5%-ը բնակվում է տնակում, 17%-ը բնակվում է հարազատի, ծանոթի կամ բարեկամի հատկացրած տանը, իսկ 4,3%-ը՝ տան տիրոջ հետ միասին: Հարցման մասնակիցների գրեթե կեսի բնակարանային պայմանները մատչելի չեն: Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց ճնշող մեծամասնությունը ամուսին չունի (ամուսնացած չէ, այրի է կամ ամուսնալուծված): Հաշմանդամություն ունեցող կանանց մեծ մասը կրթության բացակայության կամ թերի կրթության պատճառով մրցունակ չէ աշխատաշուկայում կամ ընդհանրապես չի մտածում աշխատելու մասին: Սակայն նրանց մի մասը հետաքրքված է զարգացնել իր հմտությունները՝ աշխատանք գտնելու համար:

- **Ընդհանուր տեղեկություններ:** Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց զգալի մասն ունի բազմակի հաշմանդամություն: Առավել հաճախ հանդիպող հաշմանդամության տեսակը ֆիզիկական խնդիրն է: Հաշմանդամություն ունեցող տեղահանված կանայք առավելապես բնակվում են Սյունիքում, այնուհետև Երևանում և Կոտայքում: Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող ամեն երկրորդ կինը բնակվում է գյուղական համայնքում:

- **Բնակարանային պայմաններ:** Հետազոտության արդյունքները փաստում են, որ բավական խոցելի են բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց բնակարանային հարցերը: Մասնավորապես, բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց գրեթե 60%-ը բնակվում է վարձակալության հիմունքներով, միայն 21.3%-ն է նշել, որ բնակարանը պատկանում է իրեն կամ իր ընտանիքին:
  Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց մի զգալի մասը բնակվում է բազմանդամ ընտանիքներում, ինչը կարող է ֆիզիկական և հոգեբանական լրացուցիչ խոչընդոտներ ստեղծել:

- **Ֆիզիկական և հոգեբանական հարմարավետության գնահատում:** Կանանց գրեթե կեսը նշել է, որ կացարանն ավելի շուտ հարմար չէ կամ ընդհանրապես հարմար չէ ֆիզիկական կարիքներին: Ինչ վերաբերում է հոգեբանական հարմարավետությանը, ապա այս դեպքում, հարցվողներն առավել հաճախ դեպքերում դժվարացել են պատասխանել՝ արդյոք իրենց հոգեբանորեն հարմար և ապահով են զգում: Սա փաստում է այն մասին, որ բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք դժվարանում են գնահատել իրենց հոգեբանական վիճակը:

- **Կրթական կարիքները:** Բավականին մտահոգիչ է, որ հարցմանը մասնակցած կանանց 12.8%-ը դպրոց չի հաճախել, իսկ 17%-ը թերի միջնակարգ կրթություն ունի: Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց միայն 17%-ն է

ավագ դպրոց հաճախել: Մտահոգիչ է նաև այն, որ հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանցից որևէ մեկը չունի մագիստրոսի և ասպիրանտի աստիճան: Տեղահանության պահին 7 հարցված հանդիսացել են որևէ ուսումնական հաստատության, 7-ն էլ՝ հիմնական հանրակրթական դպրոցի աշակերտներ և սաներ: Տեղահանությունից հետո կրթությունը չի շարունակել 7 աշակերտներից միայն 1-ը՝ դպրոցի հեռավորության և դասընկերների բացասական վերաբերմունքի պատճառով:

- **Վերապատրաստման և նոր մասնագիտություն սովորելու կարիքները:** Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց շուրջ մեկ երրորդը ցանկանում է մասնակցել վերապատրաստման ծրագրերի: Հատկանշական է նաև այն, որ հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք ավելի շատ ցանկանում են մասնագիտական հմտություններ ձեռք բերել, քան փափուկ հմտություններ: Կանանց շուրջ 14,9%-ը նշել է, որ ունի նոր մասնագիտություն սովորելու կարիք:

- **Զբաղվածություն:** Մտահոգիչ է, որ հետազոտությանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց շուրջ 72.4%-ը գործազուրկ է, որից 60%-ը չի փնտրում աշխատանք: Որպես աշխատանք չփնտրելու պատճառներ, ամենահաճախ տրված 2 պատասխանները կապված են մանկահասակ երեխաների խնամքով զբաղվելու, ֆիզիկական և առողջական խնդիրների հետ: Որպես աշխատանք չփնտրելու պատճառներ, նշվել են նաև երբևէ աշխատած չլինելը, հմտությունների պակասը կամ բացակայությունը, ադապտացիայի դժվարությունները և աշխատավայրերի անմատչելիությունը:
  Միասնական սոցիալական ծառայությունը որևէ բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կնոջ համար, ով աշխատանք է փնտրել, չի կարողացել գտնել աշխատանք: Որպես երազանքի կամ ցանկալի աշխատանք, հաճախ կոնկրետ մասնագիտություն նշելու փոխարեն, կանայք նշել են, թե ինչ պայմաններում կցանկանան աշխատել, մասնավորապես՝ ընդգծել են աշխատանքի կայունությունը, հանգստությունը, տանից հեռավար աշխատելու հնարավորությունը, բարձր վարձատրվող լինելը: Առավել հաճախ, որպես երազանքի աշխատանք, նշվել են գեղեցկության և խնամքի ոլորտի մասնագիտությունները, մասնավորապես՝ վարսահարդարումը և դիմահարդարումը: Հաճախ նաև նշվել է սեփական գեղեցկության սրահ ունենալը: Նշվել է նաև ծաղկի դիզայնը:

- **Առողջապահական կարիքներ:** Առողջապահական կարիքների ուսումնասիրությունը փաստում է, որ հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց մեկ քառորդից ավելին ունի վերականգնողական ծառայություններից օգտվելու կարիք, սակայն չի օգտվում: Հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք առավել հաճախ նշել են, որ ունեն ֆիզիոթերապիայի, հոգեբանական ծառայությունների և ցերեկային խնամքի ծառայությունների կարիք, սակայն չեն օգտվում այդ ծառայություններից: Ինչ վերաբերում է բռնի տեղահանված

հաշմանդամություն ունեցող կանանց դեղորայքային կարիքներին, ապա 6.4%-ը ունեցել է դեղորայքի կարիք, սակայն անհրաժեշտ դեղորայքը չի ստացել: 40.4%-ը ստացել է մասնակի, և միայն 12.8%-ն է անհրաժեշտ դեղորայքը ստացել ամբողջովին: Բժշկական ծառայություններից օգտվելու կարիք ունեցել է հարցմանը մասնակցած բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց 40%-ը: Շուրջ 95% դեպքերում, կանայք ամբողջական կամ մասնակի կարողացել են օգտվել իրենց անհրաժեշտ բժշկական ծառայություններից, և միայն 5% կանանց դեպքում է, որ չեն կարողացել ստանալ անհրաժեշտ բժշկական ծառայությունը:

- **Բռնություն**: Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք ավելի հաճախ բռնության են ենթարկվել դրսում, քան տանը: Մասնավորապես, եղել են ուժի գործադրման սպառնալիքներ և ուժի ցուցադրում, ինքնագնահատականն իջեցնող խոսքեր, ամոթանք և արհամարհանք: Ինչ վերաբերում է տանը կատարված բռնություններին, պետք է նշել, որ դրանք բավականին փոքր տոկոս են կազմել և հիմնականում կապված են տեղաշարժերի վերահսկման, արտաքին աշխարհի հետ կապի վերահսկման, որոշումների ընդունման վերահսկման, ինքնագնահատականն իջեցնող խոսքերի և ավելորդության զգացում առաջացնելու հետ:

- **Սոցիալական պաշտպանություն:** Բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք նշել են, որ ամենից շատ ունեն հիգիենիկ միջոցների, այնուհետ՝ սննդի, դեղորայքի և հագուստի կարիք: Ինչ վերաբերում է տարբեր ծառայություններ ստանալուն, ապա գերակշիռ մեծամասնության դեպքում, բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք գրեթե չեն օգտվում որևէ ծառայությունից: Մասնավորապես, որևէ կին չի ստացել աջակցող միջոցներ և հագուստ, 98% դեպքերում որևէ կին չի ստացել սոցիալական աշխատողի աջակցություն, իրավաբանական խորհրդատվություն և սննդի տրամադրում: Քիչ քանակով՝ առավելագույնը 5% դեպքում, բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանայք ստացել են հոգեբանի ծառայություն և հիգիենիկ միջոցներ, իսկ դեղորայքը ձեռք են բերել միայն մասնավոր միջոցներով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրագործող մարմին	Առաջարկություն	Հիմնավորում
ԱՍՀՆ	Իրականացնել բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքների բազմակողմանի գնահատում՝ համագործակցելով հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող կազմակերպությունների հետ:	Գնահատումը հնարավորություն կտա ունենալ հստակ պատկեր բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքների վերաբերյալ և իրականացնել նպատակային միջոցառումներ:
ՀՀ կառավարություն	Հատկացնել հավելյալ ֆինասական ռեսուրսներ՝ բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց մատչելի կացարան վարձակալելու, խելամիտ հարմարեցումների, ներառյալ կացարաններում օգտագործվող աջակցող միջոցների ծախսը փոխհատուցելու համար:	Հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի անձանց համար մատչելի կացարանի վարձակալումը, իսկ մատչելի կացարանի բացակայության դեպքում կացարանի ձևափոխումը, խելամիտ հարմարեցումների, ներառյալ աջակցող միջոցների ներդրումը լրացուցիչ ծախսեր է պահանջում:
ՀՀ կառավարություն, միջազգային կազմակերպություն ներ, ՀԿ-ներ	Ստեղծել բռնի տեղահանված անձանց համար պետության, միջազգային կազմակերպությունների և քաղհասարակության կողմից իրականացվող ծրագրերի, նախաձեռնությունների և աջակցության ծառայությունների մասին տեղեկատվության հեշտ ընթերցվող, ձայնային, ժեստերի լեզվով, բրայլյան գրերով տարբերակները:	Սա հնարավորություն կտա, որ հաշմանդամություն ունեցող բոլոր խմբերի կանայք կարողանան իրենց համար մատչելի ձևաչափով իրազեկվել և օգտվել նախատեսված միջոցառումներից:
ՀՀ կառավարություն, միջազգային կազմակերպություն ներ	Կայուն աջակցություն տրամադրել հաշմանդամություն ունեցող անձանց և կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպություններին, ինչպես նաև անկախ կյանքի	Սա հնարավորություն կտա ՀԿ-ներին շարունակական, որակյալ ծառայությունների միջոցով նպաստել բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող

	կենտրոններին՝ բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց համար ծառայություններ մատուցելու նպատակով:	կանանց զորեղացմանը և անկախ կյանքին:
ԿԳՄՄՆ, ԱՍՀՆ, ՀԿ	Հստակ բյուջե հատկացնել՝ խթանելու և խրախուսելու բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների կրթության հնարավորությունները, թե՛ ֆորմալ՝ նախնական, միջնակարգ, մասնագիտական, բուհական և հետբուհական, թե՛ ոչ ֆորմալ հարթակներում, ներառյալ մասնագիտական վերապատրաստումները և նոր մասնագիտությունների ուսուցանումը: Սա իր մեջ ներառում է նաև որակյալ և մատչելի կրթություն ապահովելու համար պահանջվող խելամիտ հարմարեցումները՝ աջակցող միջոցներ և տեխնոլոգիաներ, ժեստերի լեզվով թարգմանություն, մատչելի կրթական նյութեր:	Կնպաստի բռնի տեղահանված կանանց որակյալ կրթությանը, զորեղացմանը, աշխատանք ունենալու հնարավորությունների մեծացմանը, տնտեսական անկախությանը և ներառմանը:
ԱՍՀՆ	Հավելյալ միջոցներ հատկացնել զբաղվածության պետական ծրագրերում բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց համար նախատեսված հատուկ միջոցառումներին՝ ուղղված աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունների ուսուցմանը, աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին խրախուսմանը, բիզնեսի հիմնմանը:	Սա հնարավորություն կտա մեղմացնել աղքատությունը բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց շրջանում, նպաստել վերջիններիս տնտեսական անկախությանը:
Միջազգային կազմակերպություններ	Ֆինանսական միջոցներ հատկացնել բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց զբաղվածությանն ուղղված ծրագրերին՝	Սա կնպաստի բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց տնտեսական անկախությանը:

	մասնագիտական ուսուցումներ, բիզնես հմտությունների զարգացում, բիզնեսի հիմնում:	
ՄՄԾ, ՀԿ, ԱԿԿ	Զորեղացնել, անհատական և խմբային փոխօգնության խորհրդատվություն տրամադրել, մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ և փափուկ հմտությունների զարգացման ուսուցումներ կազմակերպել բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց համար:	Հաշմանդամություն ունեցող կանայք շատ հաճախ չունեն ինքնավստահություն իրենց ներուժի հանդեպ: Միևնույն ժամանակ տեղահանման հետ կապված սթրեսը և տրավման կարող են նրանց ավելի մեկուսացնել, հիասթափեցնել և ապագայի հետ կապված ոչ մի նախաձեռնություն չձեռնարկել: Առաջարկության իրականացումը հնարավորություն կտա նպաստել բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց անկախ կյանքին և տնտեսական ինքնուրույնությանը:
ԱՍՀՆ, ՄՄԾ, ՀԿ	Խթանել բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց զբաղվածության մեծացմանը, նրանց նախասիրություններին և կարիքներին համապատասխան աշխատատեղեր /հնարավորություններ առաջարկելով (տե՛ս հետազոտական զեկույցում):	Թույլ կտա բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց ունենալ իրենց նախասիրություններին և կարիքերին համապատասխան զբաղվածություն:
ԱՍՀՆ, ՀԿ	Ձևավորել և ավելացնել բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցումը (կարիքների առաջնահերթությունները տե՛ս հետազոտական զեկույցում):	Բռնի տեղահանված յաշմանդամություն ունեցող կանանց թույլ կտա ստանալ իրենց կարիքներին համապատասխան սոցիալական աջակցություն:

ԱՍՀՆ, ՀԿ, ՁԼՄ	Նպաստել հասարակության գիտակցության բարձրացմանը՝ բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց հանդեպ խտրական վարքի և հոգեբանական կամ վերբալ բռնությունը կանխարգելելու նպատակով: Սա կարելի է իրականացնել բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցեղ կանանց անհատական պատմությունների ներկայացման տեսքով:	Թույլ կտա նվազեցնել տեղահանված հաշմանդամություն ունեցող կանանց հանդեպ խտրական վարքը և բռնությունը ոչ միայն ընտանիքում, այլ նաև հասարակությունում՝ նպաստելով կանանց լիարժեք ինքնաիրացմանը և ներառմանը:
Առողջապահության նախարարություն	Տրամադրել առաջին բուժօգնության համար սարքեր և դեղորայքներ: Ստեղծել վերականգնողական ծառայությունների հնարավորություններ բոլոր մարզերում և տրամադրել ծառայություններ բոլոր բռնի տեղահանված կանանց, ովքեր դրա կարիքն ունեն: Սա իր մեջ ներառում է ինչպես ստացած ծառայությունների շարունակականությունը, այնպես էլ նոր կարիքների բացահայտումը և վաղ միջամտությունը:	Ենթակառուցվածքների տեղեկատվության անմատչելիության պատճառով՝ հաշմանդամություն ունեցող կանայք չեն բավարարել իրենց առաջնային բուժօգնության կարիքները:

Եթե ցանկանում եք ծանոթանալ հետազոտության հարցաշարին, ապա սքանավորեք ստորև QR կոդը:

«Ագաթ» ՀԿ-ի գործունեությանը ծանոթանալու համար սքանավորեք ստորև QR կոդերը:

Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ջամբուլի 8/5

Հեռ՝ **+374 77 043 042**

Էլեկտրոնային հասցե՝ agate.ngo@gmail.com

Կայք **Facebook** **Instagram**





ԳՅՈՒՄՐԻ 2023